

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Ռեֆրոտիքս
Ինժեներա-տեխնիկական ստեղծագործություն

Գործունեության նպատակը.

Սովորողների մոտ զարգացնել ինժեներական, նորարարական մտածելակերպն ու հմտությունները, ինչպես նաև անմիջական կապ ստեղծել տեսական գիտելիքների և գործնական կիրառությունների միջև: Այն թույլ կտա ծրագիրն անցած սովորողներին պատշաճ մասնակցություն ունենալ 2015թ. բնագիտատեխնիկական ստուգատեսին:

Տևողությունը.

Ծրագիրը նախատեսված է իրականացնել 1 ուս. տարվա ընթացքում:

Ծրագրի կառուցվածքը.

Ծրագրի իրականացումը նախատեսված է կազմակերպել առանձին նախագծերով: Նախագծերը կլինեն իրար գուգահեռ երկու փուլերով՝ տեսական (նախագծում/հաշվարկում) և կիրառում/պատրաստում:

Ծրագիրը (նախագծերը).

- Մեխանիկական համակարգերի նախագծում և պատրաստում
- Պարզ և միջին բարդության սխեմաների նախածում և պատրաստում
- Ավտոմատ և ղեկավարվող ռոբոտների նախագծում և պատրաստում
- Ռեֆրոտների ղեկավարման համակարգի ծրագրավորում
- Նորարարական և կիրառական նախագծերի իրականացում
- Ձեռք բերված հմտությունների սահմաններում կրթահամալիրի ներքին տեխնիկական խնդիրների սպասարկում և լուծում:

Օգտագործվող միջոցները.

Համացանց, պրոյեկտոր, համակարգիչներ ներբեռնված համապատասխան ծրագրերով, միջին բարդության ինժեներական գործիքներ/դետալներ և կոնստրուկտորներ, էլեկտրական պարզագույն սարքավորումներ (օր. դիոդներ, կոնդենսատորներ, տրանզիստորներ, դիմադրություններ, լամպեր, ձայնային/ջերմային/լուսային տվիչներ և այլն):

Լուսաբանումը.

Ծրագրի շրջանակներում իրականացված և հաջողված նախագծերը կլուսաբանվեն կրթահամալիրի [կայքում](#) և բնագիտատեխնիկական ստուգատեսի [բլոգում](#):